ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02

ՎԱ-ՍԱՏՄ-ԷԱՃԱՊՁԲ-25/35 **ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՑ**

ք.Երևան **« 22 » «հոկտեմբերի» 2025թ.,**
ժամը՝ 11:00

Հանձնաժողովի նախագահ՝

Հանձնաժողովի նախագահ՝

Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի էլեկտրոնային կառավարման և սպասարկման բաժնի համակարգչային ցանցերի ադմինիստրատոր	Վաղարշակ Թորոսյան
Անդամներ՝	
Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Էլեկտրոնային կառավարման և սպասարկման բաժնի տեղեկատվական տեխնոլոգիաների սպասարկման մասնագետ	Գոռ Հարությունյան
Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի պահեստապետ	Արթուր Միքաելյան
Հանձնաժողովի քարտուղար՝	
ՎԱ ԳԿ գնումների կազմակերպման բաժնի գնումների ավագ գործակալ՝	Աղավնի Դարբինյան

1. Նիստի քննարկման հարցեր

1.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետը և ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու» մասին թիվ 526-Ն որոշման 14-րդ կետի 3-րդ ենթակետը հանձնաժողովի քննարկմանը ներկայացվեց «Վարչապետի աշխատակազմի (Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի) կարիքների համար՝ **համակարգչային տեխնիկայի, գրասենյակային գույքի, էլեկտրական սարքավորումների և օդորակիչների** ձեռքբերման նպատակով կազմակերպված ՎԱ-ՍԱՏՄ-ԷԱՃԱՊՁԲ-25/35 ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ 17.10.2025թ.-ին Auction.am համակարգի միջոցով ներկայացված հրավերի հարցումը:

2. Նիստի ընթացքում որոշվեց

2.1 Հարցման վերաբերյալ տալ պարզաբանում հետևյալ բովանդակությամբ.

Հարցադրում N 1 Հարգելի պատվիրատու, Տեղեկացնում ենք, որ 4D Airflow տեխնոլոգիայով օդորակիչները նախատեսված են սենյակում օդի հավասարաչափ և լայնածավալ շրջանառություն ապահովելու համար՝ ստեղծելով առավել համաչափ հովացման կամ տաքացման միջավայր: Նույն ֆունկցիոնալ հնարավորությունները առկա են նաև Smart Airflow տեխնոլոգիայով սարքավորումներում: Ուստի, Ձեր կողմից նշված պահանջարկին համարժեք մատակարարում հնարավոր է իրականացնել Smart Airflow համակարգով հագեցած օդորակիչով: Եթե ձեր պահանջն ուղղված է կոնկրետ բրենդի կամ մոդելի նկատմամբ, խնդրում ենք նշել այդ մասին հստակ՝ խուսափելու համար տարակարծություններից և ապահովելու մրցույթի լիարժեք մասնակցություն բոլոր պոտենցիալ մատակարարների կողմից: Նշենք, որ ներկայումս շուկայում առկա են մի շարք հեղինակավոր և տեխնոլոգիապես զարգացած արտադրողներ, որոնց սարքավորումներն արդեն վաղուց ապահովում են նմանատիպ (կամ ավելի առաջադեմ) ֆունկցիոնալ հնարավորություններ, և այդ առանձնահատկությունները կարող են չհատուկ ընդգծվել տեխնիկական բնութագրերում՝ համարվելով որպես ստանդարտ: Շնորհակալություն համագործակցության համար:

Պարզաբանում N 1 Հարգելի գործընկեր,

Հայտնում եմ, որ Տեսչական մարմնի կողմից ներկայացված գնման հայտում կոնկրետ բրենդի կամ մոդելի նկատմամբ պահանջ առկա չէ :

Ընդունվել է որոշում՝ կողմ- 3, դեմ-0

Հանձնաժողովի նիստին ներկա անդամների և քարտուղարի ստորագրությունը

Նախագահ՝	Վաղարշակ Թորոսյան	
Անդամներ՝	Գոռ Հարությունյան	
	Արթուր Միքաելյան	
Քարտուղար՝	Աղավնի Դարբինյան	